

**Տ. ԱԴԱՄ ՔԱՐԵՎԻԿ ՄԱԿԱՐՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ
ԽՈԽՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾԻ ՄԱՅՐ ՏԱԾՐՈՒՄ
Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՆԻ ՄԵՌԵԼՈՅԻՆ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(15 օգոստոսի 2005 թ.)

«Կա ծնվելու ժամանակը և կա մեռնելու
ժամանակը»:

(Ժող. Գ 2)

«Յանուն Նօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. ամեն»:

Սիրելի հավատացյաներ, անցյալ շաբաթ պահքի հնգօրյա շրջան էր, կիրակի օրը՝ Սուրբ Աստվածածնի Վերափոխման փոնը, իսկ այսօր՝ մեռեց: Ուրախ փոնից հետո մեռեցը մեզ կարծես հիշեցնում է, որ այս կյանքում ուրախություն ու վիրություն այսպես լինում են կողք կողքի, իսկ այն, որ Եկեղեցին կարգել է ամեն անզամ պահեցողությամբ պարբարվել Եկեղեցական մեծ փոնակարարության, մեզ հիշեցնում է, որ այսպես պահեցողությամբ, մեղքերի համար զղաղով ու ապաշխարությամբ պիտի պարբարապիւնք նաև հանդերձյալ կյանքին:

Պահեցողությանն ու մահվանն առնվզող մի խրաֆական և հետաքրքիր պարմություն կա Դին Կրակարանում: Դավիթ թագավորի նորածին որդին մահամերձ էր: Եվ Դավիթը մանկան համար աղաչեց Ասկծուն, ծոմ պահեց ու գիշերը գերմին քննեց: Պալարականները երան-գնացին նրա մոր, որ նրան գերմին բարձրացնեն, բայց նա չուցեց վեր կենալ և նրանց հետ հաց չիերալ: Յոթերորդ օրը, երբ մանուկը մնառակ, պալարականները վախենում էին Դավիթին հայրնել, որովհետք ասում էին. «Քանի դեռ մանուկը կենդանի էր, այսպես խիստ էր, իսկ հիմա ինչ կանի, եթե ասենք՝ մեռավ»:

Դավիթը դեսնելով, որ պալարականները փսխում են և հասկանալով, որ մանուկը մահացել է, ասաց պալարականներին. «Մի՞թե մանուկը մեռավ»: Նրանք ասացին. «Մեռավ»: Եվ Դավիթը գերմին վեր կացավ, լվացվեց, օծվեց, փոխեց իր զգեստները, մրավ Ասրծոն փունն ու երկրապացեց Նրան: Ապա նա իր փունը մրավ և ուզեց հաց ուրբեց: Պալարականները նրան ասացին. «Այս ինչ արեցիր մանկան համար. քանի նա կենդանի էր, ծոմ էիր պահում, լալիս ու փանջվում, իսկ երբ մանուկը մնառակ, վեր կացար, կերար ու խմեցիր»: Եվ Դավիթը ասաց. «Քանի մանուկը կենդանի էր, ծոմ էի պահում ու լալիս, որովհետք մրածում էր. «Ո՞վ գիտի, գուց Տերը ողորմի և մանուկն ապրի»: Դիմա, որ մանուկը մեռավ, ես ինչո՞ւ ծոմ պահեմ, մի՞թե կարող եմ նրան եփ՝ կյանքի կոչել: Ես եմ նրա մոր զնալու, իսկ նա ինձ մոր չի վերադառնա»:

Ահա այսպիսի իմաստուն խրաբ է դալիս մեզ ասրվածաշնչյան այս պարմությունը: Սակայն եթե այդպես է, ուրեմն մենք ինչ անենք, այլևս չացենք մեր մահացած սիրելիների համար. չէ՞ որ նույնիսկ Քրիստոս Ինքը արքասվեց Իր սիրելի Ղազարոսի համար: Կամ

Ասդվածաշնչում կարդալով հարության մասին՝ զվախենա՞նք մահից. չէ՞ որ անգամ Քրիստոս Խնքը որպես մարդ վախեցավ՝ Իր Տորը ասելով. հեռացրու այս բաժակը ինձանից: Կամ խնդրենք Ասդուն, որ երկար կյանք փա մեզ. բայց Ասդված անգամ Իր սիրելի Որդուն երկարամյա երկրային կյանք շնորհեց, մե՞զ արդյոք պիտի շնորհի ծերության երջանկությունը, մե՞զ, որ Քրիստոսի անմեղության համեմաք ծանրաբեռնված ենք մնոքերով և բարձրաձայնելու համար ամոթալի ահավոր հանցանքներով:

Այս հարցերն էին հավանաբար հոգում նաև եկեղեցական մեր Սուրբ Հայրերից Սուրբ Հովհան Օսկերերանին, ով այս մասին մըորեկով՝ մեզ ասում է. «Կյանքը Ասդված է փալիս: Ու երբ Ասդված Իր փածն է առնում, ոչ որ չի կարող Նրան մնդադրել, որովհետև Իրենն է և իշխանություն ունի: Երբ մեզ պարպրով փող են փալիս, շնորհակալություն ենք հայրնում այն ժամանակահարպածի համար, որ փալիս են, և չենք մնդադրում այն բանի համար, որ վերցնում են մեզանից իրենց սեփականությունը: Միթե պիտի մնդադրենք Ասդուն, որ վերցնում է Իր սեփականությունը», - ասում է Հովհան Օսկերերանը:

Այսպես նաև Դոքը չմնդադրեց Ասդուն իր զավակների անժամանակ մահվան համար: Իսկ՝ բոլոր մարդկանց աջին իրենց սիրելիների մահը միշտ է անժամանակ է երևում, ու վշտացած սիրով չի սփոփովում միայն մեկ պարտախանով: Եվ ահա մեզ միիթարելու է զալիս նաև Սուրբ Գրիգոր Տաթևացին իր իմաստում խոսքերով. «Ոմանց Ասդված թույլ է փալիս վաղաժամ մեռնել՝ ազադելով նրանց հերթագա կյանքի ահավոր ընթացքից կամ դժոխքի դարպապարսող դեպքերից»:

Ներքևարար, ոմանցից Ասդված նրանց իսկ օգիրի համար վերցնում է այս կյանքը՝ փալով հանդերձալ կյանքը, վերցնում է ժամանակավորը՝ դարձած հավակինականը: Սակայն ահա անօրեններ կան, որ գրիտում են և հափշտակում, հանիրավի ծեծում են և սպանում ու դեռ ապրում են, և ահա կյանքեր, որոնք հանգչում են կիսավառ մոմերի պես: Շատ ամբարիշտիների Ասդված դեռ թույլ է փալիս երկրի վրա մնալ հիմնավոր պարբառներով: Նախ չարերից երբեմն բարի մարդիկ են ծնվում, և բարի զավակների համար Ասդված պահպանում է չար ծնողներին: Ինչպես որ Ասդուն հրեշտակն ասաց Սուրբ Գրիգոր Լուսավորից շառավիղներից Հուսիկ Կաթողիկոսին նրա չար և ամբարբավան որդիների մասին. «Հուսիկ, որդի Գրիգորի, մի՛ երկնչիր, ահա քո զավակներից այլ զավակներ պիտի ծնվեն, որոնք Հայաստան աշխարհի համար հոգևոր իմաստության աղբյուրներ կիխնեն, որոնք Եկեղեցու սյուներ կիխնեն, հավաքի հիմքեր, Քրիստոսի պաշտոնյաներ»: Եվ զիմենք, որ Հուսիկի ամբարիշտ որդի Աթանազինեսից ծնվեց Սուրբ Ներսես Կաթողիկոսը, ով նոր լուսավորություն բերեց Հայաստան աշխարհին:

Նարձյալ չարերին Ասդված երենմն չի սարակեցնում, որովհետև նրանց ծեռուր բարիք է լինում, ինչպես քրիստոնեության վաղ շրջանում չար բռնավորները նեղում էին քրիստոնյաներին, իսկ նրանք համբերելով՝ բազմացնում էին իրենց վարձն ու պսակը: Եվ մեկ այլ պարբառն այն է, որ Ասդված չի կամենում մնդավորի մահը, այլ նրա դարձի զալը և ապրելը, ինչպես ասվում է Սուրբ Գրքում, որպեսի բազում հանցանքներից հետո ապաշխարի և զգրկի Երկնքի Արքայությունից, ինչպես մեր Սուրբ Տրդադ թագավորը, ով սրբերի չարչարեց ու նահարակել դրվեց, բայց վերջում դարձավ հեզ և խոնարի զառ:

Նավիրենական օգդի համար հավաքայցաներից ունաց վաղամեռ լինելու Ասքծոթույլիքության մասին իմանալով՝ պետք է գիրենանք նաև, որ այս մասնահարուկ դեպքից զարդ Ասքված երկարակեցության խոսքում է բալիս Իրեն պաշտոներին: «Որոյակի, մի՛ մոռացիր Իմ խրադները և Իմ խոսքերը պահիր քո սրբում, որպեսզի երկարեն քո կյանքի օրերն ու կենդանությանդ պարհները» (Առակաց Գ 1-2), - ասում է Ասքված: «Ընդունիր իմ խոսքերը, և քո կյանքի բարիները պիդի շաբանան և պիդի ավելանան քո կյանքի ճանապարհները» (Առակաց Դ 10), - դարձալ ասում է Տերը: «Տիրոջ երկյուղն ավելացնում է կյանքի օրերը», - ասվում է Առակաց գրքում (Ժ 27), «Դարձվիր քո հորս ու քո մորը, որպեսզի երկար ապրես երկիր վրա», - ասում է Ասքված Տաճարականյան պարվիրաններում (Ելք Ի 12):

Դողոս առաջըալը, այս պարվիրանի մասին խոսելով, ասում է, որ սա Ասքծո կողմից մարդկությանը դրված առաջին խոսքումով պարվիրանն է (Եփես. Զ 2), այսինքն՝ այն պահենու դեպքում անպայման սրանալու ենք խոսքացվածը: Այժմ գիւտնենք, թե ո՞ր են այսօր՝ մեռելոցի օրը, այն հավաքայցաները, ովքեր ուրախությունների, հարսանիքների, մկրությունների ժամանակ հաճախ ոչ թե հանուն Ասքծո, այլ հանուն ուրախության ու դոնախմբության լցոնում են Եկեղեցիները բազմահարյուր ներկայությամբ: Եթե հարկապես Սուրբ Զաքրի կամ Խաչվերացի մեռելոցներին գերեզմանափներ գնաք, կրթաներ մեքենաների ու մարդկանց բազմություն և կլսեք, թե ինչպես մեղյաններին ամփոփող լուս գերեզմանները լի են ողջերի ճայներով:

«Կա ծնվելու ժամանակը և մեռնելու ժամանակը», - ասում է ասրվածաշնչան իմաստունը: Եկեղեցին հոգևոր ծննդյան ու կյանքի վայր է, իսկ գերեզմանապրոնք՝ մեռելավայր: Եվ ծննդյան ու մահվան նոյն հերթականությամբ պետք է լինի նաև հաճախելը նախ Եկեղեցի, որ կյանքն է և աղոթք ննջեցյալների կենդանի հոգիների համար, և ապա՝ գերեզմաններ, որոնք Քրիստոսի նկարագրմամբ «դրախ գեղեցիկ են երևում, մինչ ներսից լի են մեռելների ոսկորներով և ամենայն ապականությամբ» (Մագթ. Ի Գ 27):

Ղազարոսի մահվան առիթով Քրիստոս արդասվեց: Սակայն Նա լալիս էր ոչ միայն Ղազարոսի համար, այլև, ինչպես ասում է Սուրբ Եփեմ Կոստին, Տերը նախ և առաջ արդասվում էր այն բոլոր մարդկանց համար, ովքեր մարմնով ապրում են, բայց հոգեպես մեռած են և հավիրենապես հոգևոր մահվան մեջ, այսինքն՝ Ասքծուց հեռու: Մեռ է այսօր Քրիստոսի նմանությամբ աղոթենք և ներքին կամ արդարին արդասաւերով լաց լինենք ոչ միայն մեր ննջեցյալների, այլև բոլոր նրանց համար, ովքեր այսօր, ցավոք սրբի, իրենց սխալ ընթացքով մեզ հասկացնում են, թե ինչ նկատի ուներ Քրիստոս, երբ ասում էր՝ թող մեռելները բաղեն իրենց մեռելներին (Մագթ. Ը 22, Ղուկ. Ձ 60): Եվ ինչպես որ Դավիթ թագավորը իր մանկան մահից հետո մրավ Ասքծո Տուն ու երկրպագեց Նրան, մենք էլ նրա բարի օրինակին հերթելով և արդեն նոր իմաստությամբ խորհենով, որ կա՛ ժամանակը ծնվելու և ժամանակ՝ մեռնելու, ժամանակավոր վիշտը արգելք չդարձնենք ասրվածաշնչության՝ միշտ փառավորելով Նորը, Որդուն և Սուրբ Նոգուն այժմ և միշտ և հավիրյան հավիրենից: ամեն: